4264

2600

2600

ԷՕԳՈՒՕԳԱԻՏ

ՑԱՑՏԱՐԲԱԼԹԻՆ

Յովակիմայ Եղիազարեան

Յաղագս Հանգիստարանին Հայոց Ստամբուլ։

Москва, въ Типогр. Августа Семена.

№ 3772

ԱՕԳՈՒՍՏՈՍ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յովհէնոյ Աղիսպարէան

Ի Լուսաւորչակրօն աղգակից իւր 'ի սակս Աղիսպարեան դպրոցին հայոց Մոսկովու։

'Ի ՄՈՍԿՈՎ։
'Ի Տպարանէ Օգոստոսէոյ Սէմէնէանց։

1820

Տպագրեալ հրամանաւ գերբնտիր և սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն ԵՓՐԵՄԱՅ Առաջնոյ։

ԵՐԳԱՍԻՈՒՏ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԵԱՐՔ։

Ս ՔԱՆԶԵԼԻ Է ՄԾ յամ գործս իւր, և առաւել քան զառաւել սքանչելի յարարչութեանն մարդկային սեռի. որոյ սահմանեալ յիսկաքանչ նմանութեն նորա, և պերճացեալ բանական տրամախորհ մտաւք՝ ինքն միայն մարթանայ 'ի մէջ բիւրաւորդի կենդանեաց զԱրարիչն իւր ճանաչել, և անսահման արարչասիրական բարերարութեն նորա լինել խելամուտ։

Այլ թէպէտ այսպիսի է և այսչափ առատ ձիր պարգևաց Ծայրագոյն Լինն հեղեալ 'ի մարդն, սակայն առ 'ի վայելել նորա անվթար 'ի նոյն, և առ 'ի զանազանել յանբան կենդանեաց ըստ արժանւոյն՝ պէտք են նմա կիրառութեամբ բանական կարողութիւնքն։ ապա թէ ոչ՝ եթէ զտղայ մշտատատան և խակամիտ. կամ յոռետոյն ևս՝ եթէ զանխօս անասուն և շնչաւոր՝ ապարդիւն կացուցանէ զառ 'ի վերուստ շնորհեալ ինքեան զայն պարգև, որ հրեշտակաց է սեպհական։ Այլ յայս սակս իսկ պատճառ երջանկութեան, առիթ զօրութեան, քանոն վարուց բարելաւութեան. և 'ի գլուխս ամենայնի՝ միջոց անսասերիւր ճծպաշտութեան՝ առ 'ի քաջահմուտ արանց յամենայն 'ի դարս հոմարեցաւ հրամանգութեան բանեղէն մտաց, և վարժութեան հարկաւոր գիտելեաց։

Այլ կարի քաջ յիրաւունս. վասն զի էՀ՝ և էՀ՝ հնար, նստեալ յաղջամուղջ խաւարի՝ գործել զպատեհաւոր և զկատարեալ ինչ. այլ առաջնորդութեամբ լուսոյ սկզբնաւորի համ և 'ի գլուխս ելանել։ Ըստ որոյ՝

ոչ ոք երբեք զօրեաց առնել զարժանաւոր ի Ն և հասարակաօգուտ, որ էր յաւաջն կիրթ և լուսափայլ մտաց աչաց ։

Ա. յսու օրինակաւ քաջահամբաւ ազգք հնագոյնք մարթացան զհայրենիս իւրեանց աշխարհի գերամեծար ընծայեցուցանել, և 'ի թըշնամեաց վնասաբեր յորձանաց յարձակմանց պատսպարել և ազատ կացուցանել. 'ի ձեռն դպրոց միայն ձեռնհաս եղեն ամենեքեան աւհասարակ զազգս իւրեանց բազմազան քաջօգտակար արուեստիւք ճոխացուցանել, զվարս և զբարս քաղաքակցացն ուղղել և քաղցրացուցանել. հրահանգուք և եթ 'ի դլուխ ելին արդեօք զանձինս կենցաղօգուտ և միաբան պահպանել ը իւրեարս, ահարկու և շքեղաշուք ը օտարս. և որ ևս է՝ անմահ և գերահամբաւ արձան յիշատակի կանգնել 'ի միտս ապագայից ։

Ա. դե՝ հարցցուք ցնախնի ՀՈՒՄայեցիս և ցՀելլենացիս, թէ զինարդ՝ կամ ի՞ իւիք արդեօք յաջողեցաւ նոցա լինիլ այնքան երևելի, իմաստուն և քաջագօտի քան զայլ համ ազինս աշխարհի։ ՈրովՀ արդեօք բարեդիպեցան նոքա տիրել երից մնասանց երկրագնտոյս. և առ հասարակ յամենեցունց իբրև գերաբուն ազգ մարդկան համարիլ և մեծարիլ. Ա. թէ հայեսցուք 'ի կարգս օրինաց, 'ի սահմանս իրաւաբանութեց, 'ի քաղաքականութի և 'ի տնտեսութի նոցա. յընտրութիս և 'ի հնարաւորութիւնս ատիճանաց և իշխանութեց, 'ի մարզութիս պատերազմական մրցմանց, և յորս յայսպիսի աշխարհալուր մնասանց են սակի, նոյն հետայն հարկեսցուք խոստովանիլ, զի այն համ պատշաճաւորութի և շահեկանութի՝ լուսաւորուք մտաց և կրթականուք բարուց է նոցա 'ի ձեռս բերեալ և յառաջ մղեալ ։

Ա՛ է ապաքէն նովիմբ յաջողուք տեսանեմք զաւուրքք մերովք պանծացեալս զՀնդղիացիս, զՊաղղիացիս, զՊերմանացիս, և 'ի յետնումն զՊուսս իսկ. որք մինչդեռ ընկղմեալ էին 'ի խորս անհնարին տգիտութե և 'ի սոպռ կենակցութե՝ զինարդ խարխափելով ընթանային յայսմ աշխարհի լրապատար տեսարանիս. բայց այն ինչ է հաս նոցա ժամանակ ընդունելի և օր փրկութե. երբ քաղցր ակնարկութին երկնային վերածեաց զնոսա 'ի լոյս երեսաց իւրոց, և եբաց զդրունս խաւար մտաց նոցա յըմբռնումն բազմապատիկ կենցաղօգուտ մնասանց ուսումնականութե՝

յանմշտեան փութացան ուշի ուշով զծածանիր յատկուն սեռի իւրեանց մերկապարանոց կացուցանել, և զամ՝ պարտուպատշաճնն հնարել և սիրուռ տարածանել, յօգուտ և 'ի զուարճուն ինքեանց, 'ի շուք պարծանաց ազգի իւրեանց, և 'ի փառս օրհնաբանեալ Հաստչին Տամի։

Ահա այս է և այսչափ շահեկանուն և պիտանուն դպրոցն և լուսաւորութեան։ զորոյ զյարդն մինչդեռ աշխարհահամբաւ հարք մեր Ճանաչէին, և 'ի հայրենիս մեր մուծանել նկրտէին՝ մեք ևս զօրէն այնց լուսաշաւիղ ազգաց ազատաբայլ ձեռամբք, և վեհապանծ փառօք բերկրամիտ կենցաղավարեաք։ Բայց բաբե՞ թշուառուն մերում։ երբ դպրոցն 'ի մէջ անգոմնեցաւ, և ուսումնականուն տեղի տուեալ դադարեցաւ, սկսաք այնու հետև զօրինօք բարուք կենցաղավարուն ապախտ առնել, և զազատականուն մեր յանարգանս մատնել, յանձանց մերկացեալ մինչ հոպաւ զամ՝ զպարծանս տիեզերասաստ մերոց նահապետաց։ որով առ սակաւ սակաւ ընտելացաք զտրկուն յօժարակամ յանձն առնուլ, և նախամեծար համարել զայն քան զշքեղաշուք վեհանձնուն նախնի Հայկազանց։

Ա՛վ մեծի տարաբախտուն Արամեան տոհմիս։ և թէպէտ երբեմն երբեմն ոմանք 'ի հայրենասէր իշխանաց և 'ի հոգևոր առաջնորդաց մերոց՝ զուշ 'ի կուրծս եդին մուծանել յաշխարհ մեր զանվրէպ միջոցս բարուք քաղաքավարուն և նախանձելի կենակցուն, սակայն տարբերուն ժամանակին, անանդորրուն մերս աշխարհի, անմիաբանուն ազգիս, և մանաւանդ անանկուն ամենեցունց՝ արդելաւիթ գտան այդմ։ Օրքաջ նկատեալ ոմանց 'ի գիտնական հոգևորականաց մերոց՝ 'ի յեռեթնեատանսերդ դարտն՝ ապաստան անկան 'ի Բաղդաւէտ տէրունս Եւրոպացւոց, զառ յինքեանց յղացեալ զհարենաշահ զխորհուրդն անդ ծնանիլ։ Արդարև սիրելն կալան անդէն լուսաւորել զմիտս մեր թարգմանուն և տպագրուն օգտակար իմաստալից ինչ ինչ գրեանց։ բայց չև հասեալ նոցա 'ի նպատակ ձեռնարկուն իւրեանց՝ վասն անփարթամ՝ անպաշտպան և սակաւաթիւ գոլոյ նոցա՝ յետ սակաւուց լքեալ տկարացան, և ակամայ կամաք հրաժեշտ տուեալ յանձահրաւէր խորհրդոյ իւրեանց՝ տեսին դառնուն սրտի զայնքան աշխատանս իւրեանց յանարգանս մատնեալ և յումպէտս կարգեալ։ Սոքա էին անմահական յիշատակաց

արժանի

արժանի գերաշուք Ոսկան վարդապետն, Թովմաս Եպիսկոպոսն, Ղուկաս դպիրն Անանդեցի, և այլք ոմանք։

Յաջորդեցին ապա սոցա այլ Աբրամածին Կրօնաւորքն ոմանք. որք Թէպէտ գոլանի աշխատասիրուբ և յաջողաձեռն հետազօտուբ իւրեանց երևելի ընծայեցուցին զանձինս 'ի նորոգումն բազմահարուստ Հայկական բարբառոյ մերոյ. որպէս և 'ի ձեռն ազգի ազգի յոդնիմաստ մատենից շարադրուբ և Թարգմանուբ՝ քաջադիպուբ ի մն յառաջադէմ մատուցան ըստ կարի յարդարել զմիտս մեր յըմբռնումն կարևոր մակացուբեց, բայց սակայն բաժանեալք 'ի մէնջ, և յարեալք յեկեղեցին Հռովմայ՝ դուն դործեցին 'ի սկզբանէ ոնաի և այսր՝ աչալուրջ ճարտարուբ առ սակաւ սակաւ և զմեզ օտարացուցանել յուղղադաւան սրբոյ Եկեղեցւոյ մերմէ, և 'ի շաւղաց մերոց լուսաբուղխ ածահաճոյ Հայրապետաց։ Եմին իրի՝ զոր ինչ խմաստուբ յօրինեալ ցարդ 'ի լոյս ընծայեցին՝ զնոյն և յաւելուածովք օտարաձև վարդապետուն այլափոխել նկրտեցին. և զկարևորագոյն ձեռնարկուբ ըստ մեծի մասին զանց արարեալ՝ նոքօք և եթ շատացան, որք յարմարաւորքն էին 'ի գլուխ տանել զյղացեալն 'ի սիրոս իւրեանց։

Տեսեալ ուրեմն՝ Թէ քանի ողբալի է վիճակ Հայրենեաց մերոց. որ յամենեցունց առ հասարակ բարձի Թողի եղեալ մինչ խսպառ՝ յատուկ այցելուն Յարձրելոյն կարօտի, և բարեխօսուն իւր բազմերախտ նբ Հայրապետին Գրիգորի՝ զի յանշքուն իւրմէ անդրէն վերանալ կարողասցի յառաջին բարեզարդուն։ 'Ի վերայ այսր ամի ըստ ներելոյ ժամանակին և ըստ տնօրինելոյ վերնական տեսչուն՝ ոչ յումպէս լինի զարդիս ձեռն կարկառել նմա. որպէս զի սԹափեալ 'ի խաւարամած Թմրուն՝ փոյԹ կալցի վերստին զորդիս իւր 'ի լոյս տուն ջերմեան շրջեցուցանել, և կարևոր դաստիարակուԹեամբ զնոսին պայծառացուցանել։

Այս Թէ զիարդ մարԹ է այդմ լինիլ. երևի Թէ հաստատուն դրդրոցաց 'ի խաղաղաւետ աշխարհս Եւրոպացւոց 'ի պէտս մարդուն մանկանց հայաստանեայց՝ կարէ ըստ արժանեաց 'ի լաւ անդր փոխարկել զայժմեան վիճակ մերս Հայրենեաց։

Յայսպիսի ազդանամ խորհրդածուն յուզեալ զդայդ և զդերեկ երեց եղբայր իմ, ներքին խորհրդական Տերուն, և. մեծ Աստէպ առաջին

ջին աստիճանի սրբոյն Երուսաղեմի՝ բարեյիշատակ գերազանց Տ.ղայ Յովհաննէսն Աղիազարեան, բազում՝ ամօքյաւաջ քան զիրավիճն իւր յաստեացս՝ յաւաջադիր եղև բուռն հարկանել զայսպիսի համբուրելի հիմնարկուէ. այլ յաղագս յոգնախուռն զբաղանաց, ԷՐ որովք ծանրաբեռնեալ կայր զօրհանապազ՝ օրաձիգ արարեալ զայն՝ հուսկ ապա 'ի կէտ կոչման իւրոյ 'ի վերինն կայան՝ կտակաւ աւանդեաց նուաստութեան իմում կատարել զբաղձանս սրտի իւրոյ լաւագոյն ինն եղանակաւ։

Յաղագս այսորիկ յամին 1814 եկեալ իմ 'ի Ս. Պ Բուրգայ աստ 'ի Մոսկով՝ օգնականութիւն Աստուծոյ, և բարեհաճութիւն օրհնեալ աղգասիրաց Տերունեան՝ ձեռն արկի շինել զլայնանիստ հոյակապ Համալսարան. և յետ ծախելոյ աւելի քան զ200 հազար ռուբլի 'ի սեփական գոյից իմոց՝ բացայայտ դումարեալ, զոր ընկալայ յարքունական գանձանակէ. (այն է զտոկոսիս բարդեալս 'ի բազում ամաց հետէ 'ի մայր գումարեալ անդր մուծելոյ յինէն, ըստ զօրութեան կտակի գերազանց եղբօր իմոյ Տ.ղայ Յովհաննէսի,) հազիւ թէ հասուցի զայն յիւր աւարտ 'ի 1816. և 'ի սկզբան յետագայ ամի ժողովեցի զՀայկաձին մանկունս յամ շրջակայ նահանգաց, և սկիզբն կալայ 'ի ձեռն քաջակիրթ դաստիարակաց վարժել զնոսա 'ի վառս մարդասիրին Աստուծոյ։

Եւ քանզի զարդիս Աղիազարեան Համալսարանս ողջունեալ է զտիս կատարելութեան, և աշակերտք որք 'ի սմա՝ զարդացեալ են յուսմունս իմաստից, դիտնական լեզուաց և քաղաքավարութեան՝ Ճահաւոր վարկայ յանդիման առնել բարեսէր պատուելի Տ.ղդիդ իմում զամենայն զներքին և զարտաքին հանգամանս սորա, հանդերձ իսկատիպ տեսարանաւ շինուածոյն. որպէս զի ըստ ազգասիրութեան ձերում զմխիթարութեան զգեցջիք, և զյոյս ձեր առ Աստ ընդարձակեսջիք, որ վերատին արարչական խնամով իւրով դարձեալ առ մեզ՝ կամի նորոգել զազգ մեր 'ի նորոգումն լուսաւոր մտաց և բանաւոր կենցաղավարութեան։

Տ.դդ Աղիազարեան Համալսարանս 'ի գերազանց Տ.ղայ Յովհաննէս եղբօրէ իմմէ կտակաւ աւանդեալ, և յինէն յաւարտ հանեալ ունի զ200 հազար ռուբլի. որ առնէ 280 հազար ղուռուշ 'ի գանձանակն արքունի. յորմէ ստանայ 10 հազար ռուբլի. այն է 14 հազար ղուռուշ 'ի տարին։ Բաց յայսմանէ ես յարդեանց իմոց յաւելեալ եմ զայն մայր գու-

գումար. մինչև կարողանալ պահպանել ամենայն հանգամանաց բարեբաւուն զՅՕ Հայ մանկունս որբոց և աղքատաց։

Օ բաղմունք իմ և երեկոյացեալ հասակ՝ ոչ ներելով անձամբ անձին հասանել ամենայն մասանց կառավարուն սորա՝ յանձն արարի զայն լիովին 'ի ձեռս երկուց երիցագոյն որդւոց իմոց՝ ՅՕՀՍՆՆՈՒ. որ է խորհրդական Կալեկին. այսինքն Գնտապետ Տերուն և Ասպետ. և Սաչակայ. որ է խորհրդական Պալատին. այսինքն Կիսադնդապետ և Ասպետ։ Սոքա զարդացեալ իսկ յերևելի Ճեմարանս Ռուսսիոյ՝ քաջայարմարք են յուղղել զընթացս սորա 'ի բարին և 'ի կատարեալն։ Նա ունին յօգնականուն ինքեանց զԽորհրդարան բաղկացեալ յերևելի յաստիճանաւոր և 'ի դիտնական ոմանց աշնուականաց երկրիս, և 'ի թագաւորական Պռոֆէսորաց Ճեմարանիս Մոսկովու. ընդ որս է և գերապատիւ Սերովբէ դիտնական վարդապետն մեր, առաքեալ յատկապէս 'ի Սրբազնակատար և 'ի Ծայրագոյն Վրահանայապետն Սրբոյ Էջմիածնի՝ ՅԱՓԻԱՆՈՍ, լինել գործակից որդւոց իմոց, և Տեսուչ Համալսարանիս։

Թուիս աշակերտաց Համալսարանիս, որք ձրի պահպանին՝ է այժմ լրացեալ. բաց 'ի նոցանէ են և այլ բազում վարձատուք յօտար ազգաց։ Ամենեքեան առ հասարակ ուսանին զՀինգ լեզուս. այն է Հայերէն, Ռուսերէն, Լատիներէն, Յաղղիարէն և Գերմաներէն։ Ընթացք ուսումնականուն աւարտին 'ի 6 կամ 'ի 7 ամն. և այս յաւէտ կամ նուազ ըստ իւրաքանչիւրոց կորովամտուն և ընդունակուն։ Ընդ յերեսուն Հայկաձին աշակերտաց են սակի՝ ունին ձրի զվայելուչ կենցաղավարուն. այսինքն՝ զկերակս, զզգենուս, այլովքն հանդերձ։ Դաց 'ի Վերթողուն և 'ի Հռետորուն իւրաքանչիւր լեզուաց՝ հետ զՀետեւ ուսցին նաև զԱշխարհագրուն, զՊատմուն, զԱփաբերական մնակացուն, զՏրամաբանուն, զՆկարչուն, և զայլ աղատական արուեստս։ Ոմանք 'ի նոցանէ, որք զանձինս Եկեղեցւոյ նուիրեալ ախորժեսցին՝ ուսցին նաև զԱծաբանուն. որպէս զի Եկեղեցիք Հայաստանեայց պայծառասցին ուսեալ հոգևորականօք։ Սոքա ամենեքեան բաց 'ի հոգևորականաց զկնի զընթացս ուսումնականուն կատարելոյ՝ կարեն զանձինս ընծայեցուցանել Օրինուորուն, Իրաւաբանուն, Բժշկականուն, Վարտուս-

ՀԱՅԿ ԱՄԱՍՏՈՒՄ
ԵՐԵՎԱՆ
ՄԱՏԵՆԱՐԱՆ

տուղարու�, Ա արժապետուն , Ա ահաուականուն և այլն · ըստ իւրա-
քանչիւր ծնողաց յօժարասիրուն , և կամ ըստ նոցին իսկ աշակերտացն
հակամիտուն ։

Բաց յերեսուն աշակերտաց աստի՝ Աղիաղարեան Համալսարանս
որոշեալ է ընդունել և զ15 Հայ աշակերտս 'ի շրջակայ գաւառաց , և
զնոյնչափ յօտարաց · որք հատուսցեն զտարեկան վարձս վասն կերակրեաց,
բնակուն , և այլ պիտոյից կենցաղավարուն ։ Ա ման Հայոց՝ վարձք միոյ
ամի է 600 ռուբլի · որով մանկունքն առաքեալք 'ի ծնողաց , և կամ
յաղգականաց իւրեանց՝ վճարմամբ այսր դումարի պահպանեսցին աստ
ամ խնամով , և ուսցին զամ զվերոյիշեալ դիտուն · բայց զգեցուցա-
նել զնոսա կախի միշտ զծնողաց · որք վայելչապէս պարտին հոգալ
յիւրումն ժամանակի ։ Ա ինայն թէ առաքեալքն եցեն 'ի 11 ամաց հա-
սակէ մինչև 'ի 14 · և ըստ ամենայնի առողջք՝ յաջողամիտք և բարեբա-
րոյք · և դիտասցեն գոնէ ընթեռնուլ և գրել Հայերէն ։

Ա պաքէն զայս ամ նախակարգեալ բանս տեղեկուն 'ի լսելիս պատ-
ուելի ուսումնատենչ Ա զգիդ Հայոց հասուցանել 'ի դէպ վարկայ · զի
զկնի փառս վերառաքելոյ պարգևատուին ամ բարեաց՝ զգերահռչակ
կինն Ա ւետարանին ձեզ 'ի նմանուն բերջիք , և ըստ վաղեմի հայրենա-
ւանդ կարեկցուն՝ լոմնյասարաս օժանդակուք յօժարասէր լիջիք դոր-
ծակից լինել Ճոխուն և յառաջընթացուն Համալսարանիս ։ Որչափ
կարացիս՝ փոյթեռանդն կամք ընծայեցի 'ի լրումն կրթականուն երի-
տասարդաց մերոց · աւելի քան զայս առնելն զձենջ կախի բոլորովիմբ։
Ա յնթէ 'ի փառս Ա ստուծոյ և 'ի պայծառուն Հայրենեաց մերոց ումանք
'ի ձենջ ցանկասցին զնուերս ինչ դրամոց հասուցանել աստ , նոքօք
Համալսարանս կարողասցի յայնժամ անցանել քան զորոշեալ թիւ 30 ա-
շակերտաց, և ընդունել աւելի ևս 'ի դաստիարակուն, մինչև 40, կամ
50 ։ Ա յլ որ միանգամ 'ի մերազնեից բարեհաճեսցի նուիրել Համալը-
սարանիս զտպագիր կամ զձեռագիր մատեանս , և կամ զտետրակս · որ-
պիսի են Պատմագրուն , Ճառընտիրք , Ա ենկուն և այլն, հաւաստի
կարե լինել՝ զի մեք պահպանեսցուք խնամով 'ի բազմահարուստ գրա-
տան մերում , (յորոյ վերայ արդէն ծախեալ եմ աւելի քան զ20 հա-
զար ռուբլի)· արձանացուցանելով զանուն նորա 'ի Ճակատ ընծայեալ

Ու-

մնատենին. և հանդերձ Խորհրդարանաւ իմով շնորհակալ եղէց զնմանէ յաւուրկ նամակաւ։ Այլ նպէս որ կտակաւ ախորժեսցէ աւանդել ըզնուէրս ինչ յԵրարձակուն և յաւաւելուն աշակերտաց Համալսարանիս, ընկալցի շնորհակալուն 'ի մէնջ, և անուն նորա յիշատակեսցի յազգաց յազգս։

'Ի վախճանի՝ որք առ հասարակ այսպէս գործակից լինին յաւուրս դիմունն Համալսարանիս Մոսկովու, և աղօթս առնեն առ Աստուած զի թագակալ պսակաւ պսակազարդեսցէ զսկզբնաւորեալն յինէն՝ ընկալցին զհատուցումն բարեաց 'ի Տեառնէ, և աղգասիրուն պսակաւ վարձատրեսցին 'ի միւսանգամ գալստեան իւրում։ Ամէն։

'Ի Յուլիսի 1, 1820
Ի Մոսկով։

Ձերումդ Աղգակից Դերապատուութեան

Խոնարհ և Անձնադիր Ծառայ

Յովհան Աղիսալրեան։

20
48
16

20
48
16
9
150

Hauptgeschäft

18225 1828